

ԿՈՆԴԱԿ ԱՇԸՆԵԱՆԻՆ

Մկրտիչ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և Ողորմածութեամբն
Աստուծոյ Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Հա-
մազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր
Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի.

Ամեն. Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ Սրբազնան Խորհն արք-
եպիսկոպոսի խնդալ ի Տէր:

Պարտիք հայրապետական համարիմք հրաւիրել զուշ Զերոյ
Սրբազնութեան առ այն թէ սկսեալ ի սեպտեմբեր ամսոյ ամին ան-
ցելոյ, հայրագի բնիկը Բագրեանդայ, Մշոյ և այլ բազում տեղեաց
Թուրքիոյ, թողեալ զհայրենական տունս և զարտորայս իւրեանց
առանց իրիք խնամոց, յերեսաց սովոյն և նօթութեան գաղթեալ
եկին հասին այսօր ի սահմանս Խուսիոյ հանդերձ ընտանեօք և զա-
ւակօք իւրեանց յեղկելի թշւառութեան և չքաւորութեան, ան-
խնամ և անապատան և ի լրումն այս ամենայն թշւառութեանց,
յանցանեին իւրեանց ընդ սահմանս Խուսիոյ, պէսպէս չարչարանօք
գանակոծեալ կողոպուցան ի մարդախոշոշ քուրդ հրոսակաց համի-
տիյէ անւանեալ գնդին և կորուսին զոր ունէինն և զարդիս գտա-
նին ի վշտալի անձկութեան:

Ահաւասիկ այսպիսի վիճակօք պատեալ պաշարեն զմեօք բազ-
մաթիւ գաղթականք աղաւաղելի ժողովրդեանս, որոց աննկարադրելի
և սրտատոշոր դրութեան անձամբ անձին ականատես եղաք, և
զժշւառութենէ նոցին պատմագրել Զեզ մի առ մի ոչ զորէ զրիչ
մեր, զմիտս և զսիրտ մեր ի նոյն սուգ և ի տիրութիւն համարեալ:
Թէպէտ խսկզբանէ կառավարութիւնն Խուսիոյ ոչ թոյլ տայր գաղ-
թեականաց անցանել և կամէր զնոսա անդր ընդ սահմանն ի բաց
մերժել ի խստաշունչ պահու ձմերան, որով ի գագաթ թշւառու-

թեան հասեալ ի կորուսո՞ ի մահ կործանելոցն էին արդէն. սակայն տեղեկացեալ մեր կարի ցաւակցութեամբ զտառապանս նոցա, վշտակի սրտիւ փութացաք ուր ուրեմն միջնորդեւու առ կառավարութիւնն Խուսիոյ. և նահանգապետն Երևանաց, յետ ընկալնելոց զթոյլաւութիւնն ի բարձրագոյն իշխանութենէն, ծանոց մեզ զհնարաւորութիւնն առժամանակեաց բնակութեան ի գիւղս մինչ բացցին կրունք զարնանացին եղանակաց առ ի վերաբարձրուցանել զնոսա անդէն ի տեղիս իւրեանց:

Ուստի իբրև Հայր հասարակաց փութամ յորդորել զջեզ, որպէս արթուն հովիւ յանձնեալ Զեղ հօտիդ և վշտաց վշտակից, զօրացեալ և արիացեալ յԵրկնաւոր Խնամակալէն փոքրկանցս այսոցիկ, միջնորդ և բարեխսս լինել առ Բ. Դուռն և հրաւիրելով զբարեհաճ ուշագրութիւն մեծի Կայսերն օսմ. պետութեան՝ առաջի առնել զաղիողորմ վիճակ ժողովրդեանս, հոգեւոր որդւոց մերոց, և միանգամայն բացայսո առնել հանգամանօրէն զանցից, որոց հանդիպեցան թշւառացեալքն յերեսաց սովոյն և ի ձեռն համետիչ զնդին: Գաղթականքս այսոքիկ հաւատարիմ հպատակքն են ի դարաւոր ժամանակաց հետէ օսմ. Գահոյիցն և արտասուօք և ողբովք, սովեալ և ծարաւի ստիպեալ եղին թողուլ զհայրենիս իւրեանց, յուսացեալ այլուր զերծ մնալ մահւանէ: Արդ ժամ է հայրական խնամածութեամբ ջանալ ժողովել զոչսարս ցրուելս և վտարանդիս ի ծոց հայրենիտան, ուր անդըստին ի տղայ տիոց վարէին զկեանս ընդ հովանաւորութեամբ Վ.եհ. Կայսերն: Յերեսաց սովոյն և հարստահարութեան եկեալ այսր առ գտանել ապաստան ինչ առծամանակեաց, իմացան և տեսին զի աստ ժողովուրդք բազումք են և գիւղք բազմամարդք, և հաւատատեաւ զիտեմք թէ դոյզն ինչ մասն հողոյ իսկ ոչ կարացեն ստանալ զաղթականքս և անշուշտ եմք զի ի վերջոց թափուր յամենայնէ, անհնարին լինիցի նոցա հայթհայթել զկեանս և լինիցին աստանդական թափառողք, կարօտ չորաբեկ հացի ի տար աշխարհիս, հեռի ի հայրենեաց և յետին չար քան զառաջին:

Նկարագրեալ Զեղ զայս ամենայն անձութիւնս, որք օր աւուր յաւելուն առ Մեզ, փափագելով փափագիմք տեղեկանալ և զհանգամանս և զդրութիւն Զեր և առ հասարակ զներկաց վիճակ ժողովրդեանն Հայոց ի հայաբնակ գաւառոս Թուրքիոյ: Ի լրոց և ի լրա-

գրաց տեղեկացաք վասն սովոյն իշխելոյ զարդիս ի կարին, ի վան, ի Մուշ և յայլ տեղիս. սակայն անդիտակ եմք արդարեւ թէ տնօրինմալ իցէ արդեօք ստուգապէս օսմ. կառավարութեանն հասուցանել նաւովքը զցորեան ի Պոնտոս առ սովեալս և կարօտեալս ի նիկոմիդիոյ և ի զանազան կողմանս և թէ զի՞նչ խորհի Տէրութիւնն Թուրքիոյ վասն թեթևացուցանելոյ և ամհքելոյ զծանրատար դրութիւնն բազմաչարչար որդւոց մերոց:

Ուստի առաջարկեմք Զերումզ Սրբազնութեան հաղորդել Մեզ զայս ամենայն մանրամասնօրէն ի գիտութիւն, որպէս զի երկուստեք ջան ի գործ զիցուք ըստ կարելոյն հասանել յօգնութիւն անմիթար ժողովրդեանս, զի մի յոդնաչարչար և բակմակարօտ հօտին Հայոց հովիւքս կարգեալքս անտարբերութեան շահեսցուք զհամբաւ, այլ զպարախս մեր հատուսցուք ազգիս ի տառապանս և նեղութեան իւրում, հաւատարիմ կացեալ բանին Երկնային օգնականին ամենեցուն թէ Արովհեակ արարիք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարիք»:

Ողջ լերուք ի Տէր:

Մ Կ Ր Տ Ի Չ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գրեցաւ Կոնդակս 18 մարտի 1894 ամի Փրկչական և ըստ սոսմարիս ԱՅԻՒ, ի Մայր Աթոռս Հայոստաննեալց ի Ս. Էջմիածին, ի Վաղարշապատ